ՀՏԴ 455 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Ն.Ա.Ավետիսյան

ՓՈՔՐ ԱՌՈՂՋԱՎԱՅՐԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնավորվել են ՀՀ փոքր առողջավայրերի հետագա հավասարաչափ քաղաքաշինական զարգացման անհրաժեշտությունը, թույլ յուրացված գոտիների և դրանց միջավայրային հագեցվածության կարևորությունը, ռեկրեացիոն գործողությունների զանազան տեսակների համար բարենպաստ պայմաններ ունեցող առողջավայրերի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքի հրատապությունը: Վեր են հանվել թույլ յուրացված գոտիներում առողջարանային և հանգստի կենտրոնների տեղակայման առավելությունները, կատարվել է համեմատություն խոշոր առողջարանային քաղաքների և փոքր առողջավայրերի ռեկրեացիոն գործունեության կազմակերպման միջև՝ տարածաշրջանային համատեքստում առողջավայրերի հավասարաչափ տեղաբաշխման նպատակով:

Առանցքային բառեր. *առողջավայրեր, քաղաքաշինություն, ճարտարապետահատակագծային կառուցվածք, զբոսաշրջություն*

Արդի կենսապայմանները սահմանել են սոցիալական տարրերի զարգացման՝ գիտական հիմնավորման, կանխատեսումների, պլանավորման և կառավարման նոր մակարդակ, որոնցում բնակչության առողջության և հանգստի կազմակերպման խնդիրները կարևորագույն դեր են զբաղեցնում:

Պետության սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունները պետք է միտված լինեն առողջարանային և հանգստի օբյեկտների քաղաքներում ճիշտ տեղաբաշխմանը և դրանցում մատուցվող ծառայությունների շարունակական կատարելագործմանը, բնության հատուկ պահպանվող տարածքների ռեզերվացմանը, ինչպես նաև քաղաքներում նախատեսվող կապիտալ ներդրումների և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ապահովմանը:

Այս ոլորտին ընձեռված ուշադրությունն ամենևին պատահական չէ: Այն որպես հետևանք առաջացել է մի կողմից՝ մարդկանց մշակութային մակարդակի բարձրացման և նյութական բարեկեցության բարելավման խնդիրների հետ, մյուս կողմից՝ ընդհանուր առմամբ հանգստի կազմակերպման և բնակչության ազատ ժամանակի ճիշտ օգտագործման հետ: Դրա հետևանքով վերջին տասնամյակի ընթացքում զգալի փոփոխություններ նկատվեցին արժեքային չափանիշների կառուցվածքում: Այս պահանջների արդյունքում առաջացած հողային խնդիրներին, բնական ռեսուրսներին և միջավայրային միջամտության պայմաններին առնչվող պահանջները հանգեցրին նախկինում գործող հողային կառուցվածքի և նոր առաջարկվող գործառույթների համատեղման անհամապատասխանության, որոնք երկարաժամկետ մրցակցության մեջ են գտնվում տնտեսության մյուս ճյուղերի հետ:

Ներկայումս առավել արդիական են դառնում տարածքների, հանգստի և առողջարանային համալիրների օպտիմալ կազմակերպման և դրանց ճիշտ տեղաբաշխման հարցերը: Բնական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները հանգեցնում են առողջարանային քաղաքներում առողջարանային և հանգստի համալիրների ոչ հավասարաչափ տեղաբաշխմանը: Ներկա իրավիճակի և հետագա ռեկրեացիոն տեղաբաշխման վերլուծությունները ցույց են տալիս, որ առողջարանային գոտիների զարգացումը տեղի է ունենում անկազմակերպ ձևով, որի արդյունքում մի շարք առողջարանային քաղաքներ զիջում են իրենց տնտեսական ակտիվությամբ: Երկրում այս ոլորտում տարվող գնային քաղաքականության արդյունքում, հաշվի չառնելով տեղափոխության անհարմարությունները, առողջարանային և հանգստի ոլորտի այցելուների մեծամասնությունը իրենց հանգիստը կազմակերպում է հարևան Վրաստանի առավել մատչելի առողջարանային քաղաքներում:

Քաղաքների հետագա հավասարաչափ զարգացման համար անհրաժեշտություն է առաջանում առավել ուշադրություն դարձնել երկրի թույլ յուրացված, բայց միևնույն ժամանակ ռեկրեացիոն գործողությունների զանազան տեսակների համար բարենպաստ պայմաններ ունեցող առողջավայրերի զարգացմանը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որոշ ռեկրեացիոն հաստատություններ նպատակահարմար է տեղաբաշխել հենց սակավ ուրբանիզացված տարածքներում՝ փոքր քաղաքներում և առողջարանային բնակավայրերում: Ուրբանիզացիայի աճը և մարդկանց մշակութային մակարդակն արդի ժամանակաշրջանում ավելացնում են դեպի սակավ միջամտությունների ենթարկված բնական միջավայրում հանգստացողների պահանջարկը [1]: Այդ դերը կարող են ստանձնել փոքր ռեկրեացիոն կենտրոնները, որոնք առանձնանում են սոցիալ-տնտեսական ներուժի ցածր մակարդակով, բնակության համար անհրաժեշտ լավագույն սանիտարահիգիենիկ պայմաններով, կյանքի լարվածության մակարդակի ցածր ռիթմով, ժամանակակից գյուղական բնակավայրերի և բնության հետ անմիջական կապով և տարածքների վրա ճնշման բացակայությամբ՝ կառուցապատման խտության ցածր գործակցով: Հանգիստը այսպիսի վայրերում օգնում է զգալիորեն բարելավել մարդկանց առողջությունը և բարձրացնել ֆիզիկական ակտիվությունը:

Այսօր մեծ ուշադրության է արժանանում նաև ընտանեկան զբոսաշրջությունը, որում նախապատվությունը տարեցտարի տրվում է ոչ թե խոշորամասշտաբ առողջարանային համալիրներին, այլ առավել հանգիստ և հարմարավետ վայրերին [2]: Ընդհանուր առմամբ կարելի է համարել, որ ավելի շահավետ և ձեռնտու է ներդրումներ իրականացնել միջին և մեծ քաղաքներում, քան փոքրերում, հաշվի առնելով, որ քաղաքների տարածքային ընդլայնումը դրանց լայն առավելություններ է ընձեռում: Հանգստի և ռեկրեացիոն հաստատությունները միջին և մեծ քաղաքներում տեղակայելու ձգտումը կարող է պայմանավորված լինել դրանցում առկա բնակֆոնդի և գործող ինժեներական ենթակառուցվածքների օգտագործմամբ, ինչպես նաև շինարարության իրականացման համար անհրաժեշտ բազայի առկայությամբ: Մինչդեռ փոքր քաղաքներում նմանատիպ հաստատությունների տեղակայումը ենթադրում է

համապատասխան ենթակառուցվածքների զարգացման համար կապիտալ ներդրումների ապահովում [3]:

Պետք է փաստել, որ մեծ քաղաքներում ռեկրեացիոն հաստատությունների թվի ավելացմանը զուգընթաց ավելի լայնածավալ են դառնում բնակարանաշինության հարցերը, առավել բարդանում են ներքաղաքային տրանսպորտի կազմակերպման և շրջակա միջավայրի պահպանության խնդիրները: Այս ամենի արդյունքում կարելի է եզրահանգել, որ մեծ քաղաքներում ենթակառուցվածքների զարգացման կապիտալ ներդրումները կարող են նույնիսկ գերազանցել փոքր քաղաքների ներդրումներին: Բացի այդ, ռեկրեացիոն ագլոմերացիաների անկանոն աճը հանգեցնում է բազմաթիվ սոցիալ-տնտեսական և բնապահպանական խնդիրների առաջացման: Մասնավորապես, սպառնալիք է դառնում տարածքի սանիտարահիգիենիկ վիճակի վատթարացումը, որը կապված է բնակչության քանակի խտացման և հագեցած երթևեկության հետ: Բնակելի գոտիների տեղաբաշխումն էական դեր ունի տարածքների ռեկրեացիայի իրացման գործում: Սանիտարապահպանական գոտիները, որոնք տարաբնակեցման համակարգում առաջնային դեր են զբաղեցնում, իրենց չափերով ավելի համեստ են և անբավարար: Նշված խնդիրների հետ միաժամանակ, քաղաքների զարգացման հեռանկարները գնահատելիս անհրաժեշտ է նախատեսել առողջարանային գոտիներից մի շարք այնպիսի օբյեկտների տեղափոխություն, որոնք չեն համապատասխանում առողջարանային գործառույթի պահանջներին, ինչպես նաև խոչընդոտում են դրա բնականոն գործունեությանը: Անկազմակերպ ռեկրեացիոն գործունեության վնասը անմիջականորեն կապված է լանդշաֆտների բացասական բնապահպանական և գեղագիտական փոփոխությունների հետ: Դեպի ռեկրեացիոն կենտրոններ հանգստացող այցելուների աճող հոսքի տեմպերի համեմատ՝ նշված բոլոր հիմնախնդիրները լուծվում են շատ ավելի դանդաղ: Ավանդական ռեկրեացիոն կենտրոններն աստիճանաբար ավելի են ծանրաբեռնվում:

Հայաստանում փոքր առողջավայրեր կարող են համարվել առողջարանային բնակավայրերի մեծամասնությունը՝ Հանքավանը, Արզնին, Արզականը, Բջնին, Սոլակը և այլն, որոնք ունեն բոլոր անհրաժեշտ պայմանները ռեկրեացիայի կազմակերպման և հետագա ընդլայնման համար [4]: Դրանցից մեծ մասում առկա եզակի բնական լանդշաֆտը ընձեռում է հանգստի կազմակերպման լրացուցիչ հնարավորություններ: Նշված առողջավայրերի և հարակից բնակավայրերի տեղադրությունը, դրանցում առկա գործառական ուղղությունների բազմազանությունն այդ օբյեկտների զարգացման համալիր մոտեցումների կիրառման հնարավորություն է ընձեռում: Նախկինում փոքր քաղաքների տնտեսությունների զարգացման ուղղությամբ կատարված ներդրումները բավարար չէին այդ կարգի բնակավայրերի համար և չէին ապահովում նշանակալի ակտիվության մակարդակ: Կարելի է նաև եզրահանգել, որ միգուցե այդ վերաբերմունքի բացակայությունն էր, որ «փրկեց» առողջարանային քաղաքների ռեկրեացիոն ներուժը:

Խորհրդային ժամանակաշրջանում առողջավայրերի սկզբունքային զարգացման գերակայության պայմաններում հաշվի չէին առնվում դրանց բնորոշ մի շարք առանձնահատկություններ (օր. լանդշաֆտների բնապահպանական կարևորությունը), որի արդյունքում բազմաթիվ եզակի համարվող տարածքներ կորցրին իրենց յուրահատկությունը կամ անվերադարձ փոփոխվեցին: Այս ամենը հաշվի առնելով՝ առողջարանային բնակավայրերի զարգացման խնդիրը դեռևս արդիական է համարվում՝ պահանջելով զարգացման ռացիոնալ ուղղությունների սահմանում: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ այս քաղաքները տիրապետում են հանգստի կազմակերպման, առողջարանային ոլորտի զարգացման մեծ ներուժի, որոնցից զուրկ են խոշոր ռեկրեացիոն կենտրոնները՝ պայմանավորված արդեն իսկ ձևավորված միջավայրային լարվածությամբ և ռեկրեացիոն ձեռնարկությունների ձևավորված ցանցով:

Փոքր առողջավայրերի հիմնախնդիրների լուծման համար պահանջվում է արդյունաբերական զարգացման փոխարեն կիրառել դրանց ակտիվացման քաղաքականություն: Զբոսաշրջության և հանգստի կազմակերպման ոլորտի զարգացումը պետք է համարվի երկրի փոքր քաղաքների զարգացման ուղղություններից մեկը: Ներգնա և արտագնա զբոսաշրջության զարգացման հետ մեկտեղ այս տնտեսապես արդյունավետ ուղղությունը զգալի տարածում է գտնում: Առողջավայրերում անհրաժեշտ է ամեն կերպ խրախուսել դրանց զարգացման հիմնական առողջարանային ուղղվածությունը՝ այն հնարավորինս շաղկապելով զանգվածային հանգստի կազմակերպման և զբոսաշրջության ոլորտի հետ [5]: Ռեկրեացիոն ցանցի ձևավորման և տեղաբաշխման գործընթացների վերահսկման ժամանակ հիմնական ուշադրությունը պետք է դարձվի խոշոր առողջարանային բնակավայրերի աճի տեմպերի կարգավորմանը՝ նոր քաղաքաստեղծ հաստատությունների տեղակայման և գոյություն ունեցող առողջարանային հաստատությունների արդիականացման միջոցով: Այս համատեքստում կարևորվում է նաև առողջարանային բնակավայրերի միջև ընդհանրական գործառութային զոտեվորման ապահովումը, մշակութակենցաղային և ռեկրեացիոն կապերի խորացումը, ինչը կարող է անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել ծառայությունների մատուցման ոլորտի ընդլայնման համար: Առողջավայրերի առողջարանային գործառույթի հետագա արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ է մշակել ծառայությունների մատուցման համալիր ծրագիր առողջարանային տնտեսության, առևտրի և հասարակական սպասարկման, տրանսպորտային ենթակառուցվածքների, հանգստացողների կենցաղային և մշակութային ծառայությունների ապահովման, հուշանվերների արտադրության կազմակերպման համար: Այս քաղաքներում փոքր և միջին առողջարանային հաստատությունների կառուցումը կապահովվի տեղի բնակչության զբաղվածության խնդիրը, կխթանի սոցիալական և մշակութակենցաղային ոլորտների ծառայությունների զարգացմանը, ինչպես նաև կարևոր գործոն կհանդիսանա աշխատունակ բնակչության՝ դեպի խոշոր քաղաքներ տեղափոխության սահմանափակման համար: Փոքր քաղաքներում ռեկրեացիոն ձեռնարկությունների չափերի և քանակի ճիշտ

համադրությունը կարող է նպաստել տեղական աշխատանքային ռեսուրսների, գյուղատնտեսական հումքի, առողջարանային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև առողջավայրերի հավասարաչափ տեղաբաշխմանը տարածաշրջանային համատեքստում: Այսպիսի վայրերում տեղի բնակչության և հանգստացողների կարիքների բավարարման համար նպատակահարմար է տեղակայել հանգստի կազմակերպման օբյեկտների հետևյալ ձևերը՝ տուրիստական բազաներ, մանկական ճամբարներ, սպորտի և առողջարանային համալիրներ, ակտիվ հանգստի և զվարճանքի կազմակերպման, ինչպես նաև սննդի արդյունաբերության և սոցիալ-կենցաղային սպասարկման օբյեկտներ և այլն:

Թույլ յուրացված գոտիներում առողջարանային և հանգստի կենտրոնների զարգացումը մեծ հնարավորություններ է ընձեռում նաև արժեքավոր գյուղատնտեսական հողատարածքների պահպանման համար՝ դրանք ընդգրկելով բնական լանդշաֆտի հատուկ պահպանվող գոտիներում: Ռեկրեացիոն տնտեսության զարգացումը, հաշվի առնելով աճող այցելուների և տեղի բնակչության պահանջները, թելադրում է արագ սպառվող արտադրանքների մատակարարում, որից անհրաժեշտություն է առաջանում բազմաթիվ գյուղատնտեսական արտադրությունների վերապրոֆիլավորման՝ հարմարեցման արդի պահանջարկին: Միևնույն ժամանակ պետք է լուծվի գյուղերի և հարակից բնակավայրերի բնակչության զբաղվածության խնդիրը՝ առողջարանային և հանգստյան տների սպասարկող անձնակազմի մատակարարման նպատակով:

Թույլ յուրացված գոտիներում առողջարանային և հանգստի կենտրոնների տեղակայումը, որը խոշոր առողջարանային քաղաքներում հանգստի կազմակերպման, զբոսաշրջության կենտրոնների զարգացման տեղական հաստատված գործունեության համեմատությամբ ունի անվիճելի առավելություններ, թույլ է տալիս.

- **սահմանափակել** առողջարանային խոշոր քաղաքների աճի միտումները՝ որպես այլ ընտրանք առաջարկելով ռեկրեացիոն գոտում գտնվող նոր փոքր առողջարանային քաղաքների համակարգի ներդրմանը, որոնք ունեն զարգացման բարենպաստ պայմաններ,

- **խուսափել** այցելուների ավելորդ համախմբումից բնակավայրերի առանձին հատված-ներում, որը հանգեցնում է ավելորդ լարվածության, տրանսպորտային խնդիրների և բնակավայրերի խտության ավելացման, սպասարկման համակարգերի, ինչպես նաև բնական միջավայրի վրա ազդեցության նվազման,

- **վերաուղղորդել** այցելուներին դեպի նոր սակավ բնակեցված և քիչ ուրբանիզացված գոտիներ, որը հանգեցնում է գերհագեցված շրջանների բեռնաթափմանը՝ հնարավորություն տալով ավելացնել հանգստի կազմակերպման հարմարավետությունը և վերականգնել առողջարանային բուժական գործառույթները,

- **օգտագործել** բնական պաշարների հարստությունը՝ ռեկրեացիոն ռեսուրսների և տարածքների գնահատման միջոցով, դրա հիման վրա որոշելով առողջավայրերի, հանգստյան գոտիների և զբոսաշրջության ուղղվածության մասնագիտացումը, ինչպես նաև դրանց

ճարտարապետահատակագծային կառուցվածքում ընդգրկելու առավել արժեքավոր բնական լանդշաֆտները,

- **բարձրացնել** ճարտարապետական լուծումների մակարդակը՝ ստեղծելով բնության հատուկ պահպանվող տարածքներին և բնական լանդշաֆտին համահունչ նոր սանիտարաառողջարանային համալիրներ և կենտրոններ,

- **ձգտել** նոր ռեկրեացիոն գոտու կազմավորման առաջադեմ համակարգի ձևաստեղծման՝ ռեկրեացիոն համալիրների և ակտիվ տարածքային զարգացմամբ բնակավայրերի մեկուսացման շնորհիվ,

- **դիտարկել** որպես ռեկրեացիոն համակարգի հետագա զարգացման պոտենցիալ ռեզերվային տարածքներ բոլոր այն տարածքները, որոնք գտնվում են ռեկրեացիոն գոտում, բայց իրագործում են ոչ ռեկրեացիոն գործառույթներ,

- **ապահովել** տեղի բնակչության համար բնակության բարենպաստ պայմաններ, կենցաղ-տնտեսական սպասարկման ծառայությունների, ինժեներական ենթակառուցվածքների կենտրոնացման միջոցով,

- **լուծել** երկրի ռեկրեացիոն ոլորտի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրները, զգալիորեն նվազեցնելով առանձին շահագործման ծախսերը,

- **ստեղծել** ըստ նշանակության տարբերակված տրանսպորտային ենթակառուցվածքների համակարգ՝ բնակավայրերի ռեկրեացիոն գոտու ամբողջ տարածքում տարանցիկ երթևեկությունը դուրս բերելով առողջարանային գոտիներից,

- **կանոնակարգել** գյուղատնտեսության զարգացումը՝ ապահովելով արժեքավոր գյուղատնտեսական նշանակության հողերի պահպանումը, գյուղատնտեսությունը վերապրոֆիլավորել՝ հարմարեցնելով տեղի բնակչության և այցելուների պահանջներին՝ արագ սպառվող ապրանքների իրացմանը:

Н.А.Аветисян

ВОЗМОЖНОСТИ ОРГАНИЗАЦИИ ГРАДОСТРОИТЕЛЬНОЙ СРЕДЫ МАЛЫХ КУРОРТОВ

Обоснована необходимость дальнейшего равномерного градостроительного развития слабо развитых курортных зон РА. Обоснованы важность слабо освоенных зон и их средового насыщения, необходимость особого отношения к курортам, имеющим благоприятные условия для разнообразных видов рекреационной деятельности. Были выявлены необходимость и приоритеты размещения санаториев и зон отдыхов в слабо развитых курортных городах РА.

Был проведен сравнительный анализ организации рекреативной деятельности в больших и маленьких курортных городах с целью равномерного размещения курортов в региональном контексте.

Ключевые слова: *курорты, градостроительство, архитектурно-планировочная структура, туризм*

N.A.Avetisyan

THE POSSIBILITIES OF THE ORGANISATION OF URBAN PLANNING ENVIRONNEMENT AMONG RESORTS

The following factors are justified: the necessity of further equal urban development of small health resorts in the Republic of Armenia, the importance of weakly appropriated zones and their environmental abundance, the urgency of special attitude towards the health resorts with favorable conditions designed for various types of recreational activities are illustrated, comparison is made regarding the management of recreation activity between big health resort cities and small health resorts with the aim of equal distribution of health resorts in the regional context. The installation advantages of health resort and recreation centers in weakly appropriated zones are revealed.

***Keywords**: resorts, urban planning, urban structure, tourism*

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության թույլ յուրացված տարածաշրջանների քաղաքաշինության կայուն զարգացման ուղիները / **Յու.Ա.Սաֆարյան, Ջ.Ն.Մուրադյան, Ս.Ա.Թովմասյան, Մ.Մ. Դավթյան.** - Եր.: ԵրՃՇՊՀ հրատ., 2011. - 132 էջ:
2. **Roux L.** Le thermalisme européen au XVIIIe siècle, étude comparative de quelques villes d`eaux. France, Angleterre, Belgique, Suisse, Italie, Allemagne. – Grenoble: Universite Pierre Mendès-France, 2009. - 126 p.
3. **Иодо И.А., Потаев Г.А.** Градостроительство и территориальная планировка: учебное пособие. - Ростов н/Д : Феникс, 2008. - 285 с.
4. **Ավետիսյան Ն.Ա.** ՀՀ առողջավայրերի համալիր զարգացման առաջարկությունները // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ. – Եր.: ՃՇՀԱՀ հրատ., 2014.- Հատոր I (52). - էջ 42-51:
5. **Аветисян Н.А.** Перспективы развития курортных городов Армении// Вестник МГСУ. – М., 2014. - № 1. - С. 7-14.

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակում:

***Ավետիսյան Նարեկ Ավետիսի, ճ.թ.,** (ՀՀ, ք.Երևան)- ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. Ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., Քաղաքաշինության ամբիոն, ասիստենտ, (+374) 91219588, aveen89@mail.ru*

***Аветисян Нарек Аветисович, канд. архит.,** (РА, г.Ереван)-НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академ. Ал. Таманяна, н.с., кафедра Градостроительства, ассистент, (+374) 91219588, aveen89@mail.ru*

***Avetisyan Narek Avetis**, **doctor of philosophy (Ph.D.) in Architecture** (RA, Yerevan)-, -NUACA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, researcher, Chair of urban construction, assistant, (+374) 91219588, aveen89@mail.ru*

Ներկայացվել է՝ 03.03.2017թ.
Ընդունվել է տպագրության՝ 30,03,2017թ.